ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2024 թվականի N 203-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 806-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 9.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«9.2. Դիմումի մուտքագրվելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում «Անտառտնտեսություն» մասնաճյուղի համապատասխան մասնագետներն իրականացնում են հայցվող հողամասի ուսումնասիրություն, տարածքի ծայրակետերի կոորդինատների միջոցով ստանում հողամասի տարածական պատկերը: Կազմված գործը, որն իր մեջ պարունակում է դիմումը, կազմված հողամասի տարածական պատկերը և «Անտառտնտեսություն» մասնաճյուղի կարծիքը, ներկայացվում է կազմակերպությանը: Կազմակերպություն դիմումի մուտքագրման պարագայում

այն ուղարկվում է համապատասխան «Անտառտնտեսություն» մասնաճյուղ, և ժամկետը հաշվարկվում է «Անտառտնտեսություն» մասնաճյուղ մուտքագրման օրվանից: Կազմակերպությունը մերժում է դիմումը սույն որոշման 9.3-րդ կետով նախատեսված դեպքերում, իսկ չմերժման պարագայում 5 աշխատանքային օրվա ընթացքում քարտեզագրող մասնագետի միջոցով ստանալով քննարկվող հողամասի WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով կազմված հատակագիծը՝ այն գործի հետ տրամադրում է Շրջակա միջավայրի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն): Նախարարությունը հողամասի հատակագիծը՝ վեկտորային ֆորմատով, կամ հողամասի շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները՝ տեքստային Excel ձևաչափով, թղթային և էլեկտրոնային կրիչով ուղարկում է Կադաստրի կոմիտե: Կադաստրի կոմիտեն մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում նախարարությանն է տրամադրում տեղեկատվություն քննարկվող հողամասի գտնվելու վայրի (մարզ, համայնք, կադաստրային թաղամասի ծածկագիր), նպատակային և գործառնական նշանակության, տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության, գոտիականության գործակցի վերաբերյալ: Կադաստրի կոմիտեի պատասխան գրությունը ստանալուց 3 աշխատանքային օրվա ընթացքում նախարարությունը կայացնում է որոշում՝ մրցույթ հայտարարելու մասին: Մրցույթն իրականացվում է սույն կարգի 5-րդ բաժնով սահմանված կարգով:».

2) 10-րդ կետում «կոմիտե» բառը փոխարինել «նախարարություն» բառով.

3) 11-րդ կետում «կոմիտեի» բառը փոխարինել «նախարարության» բառով.

4) 13-րդ կետում «կոմիտեի» և «կոմիտե» բառերը փոխարինել համապատասխանաբար «նախարարության» և «նախարարություն» բառերով.

5) 14-րդ կետում «Կոմիտեն» բառը փոխարինել «Նախարարությունը» բառով.

6) 18-րդ կետում «կոմիտե» բառը փոխարինել «նախարարություն» բառով.

7) 25-րդ կետում «կոմիտեի» բառը փոխարինել «նախարարության» բառով.

8) 27-րդ, 28-րդ և 29-րդ կետերում «կոմիտեի» բառը փոխարինել «նախարարություն» բառով.

9) 30-րդ կետում «կոմիտեն» բառը փոխարինել «նախարարությունը» բառով.

10) 31-րդ կետում «լիազորված մարմնի,» բառերից հետո գրված «կոմիտեի,» բառը հանել.

11) 31.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«31.1. Հանձնաժողովի գործունեության վայրը Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն է (հասցե՝ քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3):».

12) 32-րդ կետում «կոմիտեի www.forestcommitte.am» բառերը փոխարինել «նախարարության www.env.am» բառերով.

13) 43-րդ կետում «կոմիտեում» բառը փոխարինել «նախարարությունում» բառով.

14) 51.1-ին կետում «կոմիտե» բառը փոխարինել «նախարարություն» բառով.

15) 56-րդ կետում «կոմիտեն» և «կոմիտե» բառերը փոխարինել համապատասխանաբար «նախարարությունը» և «նախարարություն» բառերով.

16) N 2 ձևում «կոմիտեի» բառը փոխարինել «նախարարության» բառով.

17) N 3 ձևում «կոմիտեի» բառը փոխարինել «նախարարության» բառով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի «Անտառների պետական կադաստրի վարման և անտառների պետական հաշվառման ու տվյալների տրամադրման կարգը սահմանելու մասին» N 133-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում «նախարարության անտառային կոմիտեին» բառերը փոխարինել «նախարարությանը» բառով.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 3-րդ կետը.

3) որոշման հավելվածի 3-րդ կետից հանել «անտառային կոմիտեի» բառերը.

4) որոշման հավելվածի 4-րդ կետում «պահպանությունն» բառը փոխարինել «կառավարումն» բառով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ